ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2



HABITUS 2

NATIONAL ACADEMY OF SCIENCES RA
INSTITUTE OF ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY

PROCEEDINGS OF THE INSTITUTE OF ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY

2

H A B I T U S

STUDIES IN ANTHROPOLOGY AND ARCHAEOLOGY

2

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ИНСТИТУТ АРХЕОЛОГИИ И ЭТНОГРАФИИ

ТРУДЫ ИНСТИТУТА АРХЕОЛОГИИ И ЭТНОГРАФИИ

2

H A B I T U S

АНТРОПОЛОГИЧЕСКИЕ И АРХЕОЛОГИЧЕСКИЕ ИССЛЕДОВАНИЯ

2

«GITUTYUN» PUBLISHING HOUSE
YEREVAN 2017

ИЗДАТЕЛЬСТВО «ГИТУТЮН»
ЕРЕВАН 2017

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2

Հ Ա Բ Ի Տ Ո Ւ Մ

ՄԱՐԴԱԲԱՆԱԿԱՆ ԵՎ ՀՆԱԳԻՏԱԿԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2

ԵՐԵՎԱՆ
ՀՀ ԳԱԱ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2017

ՀՏԴ 902/904
ԳՄԴ 63.4
Հ 125

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

Խմբագրական խորհուրդ.
Պավել Ավետիսյան (*գլխավոր խմբագիր*), Լևոն Աբրահամյան, Գրեգորի Արեշյան, Ռուբեն Բադալյան, Պիտեր Քաուի, Տորք Դալալյան (*պատասխանատու քարտուղար*), Պատրիկ Տօնապետեան, Միհրան Գալստյան, Սարգիս Հարությունյան, Թամար Հայրապետյան, Լորի Խաչատուրեան, Թեո վան Լինտ, Հարություն Մարության, Արմեն Պետրոսյան, Համլետ Պետրոսյան, Գագիկ Սարգսյան, Ադամ Սմիթ, Ջուստո Տրաինա

Editorial Board:
Pavel Avetisyan (*editor-in-chief*), Levon Abrahamian, Gregory Areshian, Rouben Badalian, Peter Cowe, Tork Dalalyan (*assistant editor*), Patrick Donabédian, Mihran Galsyan, Sargis Harutyunyan, Tamar Hayrapetyan, Lori Khatchadourian, Theo van Lint, Harutyun Marutyan, Armen Petrosyan, Hamlet Petrosyan, Gagik Sargsyan, Adam Smith, Giusto Traina

Համարի գրախոսներ՝
Հարություն Մարության, *պատմական գիտությունների դոկտոր*
Արսեն Բոբոխյան, *պատմական գիտությունների թեկնածու*

Համարի խմբագիրներ՝
Համլետ Մելքումյան, *պատմական գիտությունների թեկնածու*
Ռոման Հովսեփյան, *կենսաբանական գիտությունների թեկնածու*

Մարդաբանություն, հնագիտություն թեմատիկ երգիծանկարների հեղինակ՝ ազգագրագետ Լևոն Աբրահամյան

The volume is edited by Hamlet Melkumyan *and* Roman Hovsepyan
The cartoons are authored by Levon Abrahamyan, *anthropologist*

Հ 125 Հնագիտության և ազգագրության ինստիտուտի աշխատություններ 2: ՀԱԲԻ-ՏՈՒՍ 2: ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ. Խմբ. Հ. Մելքումյան, Ռ. Հովսեփյան – Եր.: Գիտություն, 2017. – 264 էջ:

ՀՏԴ 902/904
ԳՄԴ 63.4

ISBN 978-5-8080-1293-6

© ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ, 2017 թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԱՐԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ՀԱՆՐԱՅԻՆ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱՅՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ

Սուսաննե Ֆիլինգս
Հայոց պատմությունը քաղաքային առօրեականության մեջ 10

Համլետ Մելքումյան
Հիշողությունից ազգայնականությո՞ւն,
խորհրդային և հետխորհրդային հուշարձանները 42

Էլեն Գրիգորյան
Եվրատեսիլ երգի մրցույթը որպես ինքնությունների,
ազգայնականության և քաղաքականության արտահայտման բեմ 65

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԱՌՕՐԵԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Լիլիթ Մանուկյան
Կյանքը դեֆիցիտի պայմաններում. կանացի հագուստի
պրակտիկաները Երևանում 1970-80-ականներին 93

ՍՓՅՈՒՌՔ ԵՎ ԱԶԳԱՅՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Էլլի Պոնոմարյովա
Բնիկ թիֆլիսցիներ թե՞ Սփյուռք. քննարկում թիֆլիսաբնակ
հայերի կարգավիճակի շուրջ 117

Սյուզաննա Բարսեղյան
Հայկական մամուլի դերը Սփյուռքում էթնոմշակութային արժեքների վերար-
տադրման և տարածման գործում 142

ՊԱՏԵՐԱԶՄ ԵՎ ԲՌՆԱԳԱՂԹ

Շուշանիկ Ղազարյան
ՀՀ-ում ադրբեջանահայ փախստականների ինտեգրման
գործընթացում հայերենի իմացության խնդիրը 152

Հասմիկ Գրիգորյան
Հայոց ցեղասպանությունից մինչև «քառօրյա պատերազմ».
բռնության օրինականացման մշակութային գործոնները 163

Լուսինե Տանաջյան
Սոցիալ-մասնագիտական ինտեգրման առանձնահատկությունները
Հայաստան ներգաղթած սիրիահայերի շրջանում 184

Սոնա Ներսիսյան
Ցանցային հարաբերությունները Հայաստան ներգաղթած սիրիահայերի շրջանում 195

ՀՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Ռոման Հովսեփյան
Հնաբուսաբանական նմուշառում. դաշտային աշխատանքների ուղեցույց 212

Արթուր Պետրոսյան
Քարե գործիքների ուսումնասիրության մեթոդոլոգիան 217

Աննա Ազիզյան
Դիտողություններ Հայաստանի կուր-արաքսյան խեցեղենի հազվադեպ հանդիպող զարդաձևերի վերաբերյալ 238

Ավետիս Գրիգորյան
Սոթքի տարածաշրջանի անտիկ և միջնադարյան հուշարձանները 249

CONTENTS

CULTURAL ANTHROPOLOGY

IDENTITY AND NATIONALISM IN PUBLIC SPACES

Susanne Fehlings
Armenian History in Urban Everyday Life 10

Hamlet Melkumyan
From Memory to Nationalism?
The Soviet and post-Soviet Memorials in Rural Daily Life 42

Elen Grigoryan
Eurovision Song Contest as a Stage: Performing Identities,
Nationalism and Politics 65

SOVIET DAILY LIFE

Lilit Manukyan
Living in Deficiency: Female Clothing Practices in Yerevan in 1970-80s 93

DIASPORA AND NATIONALISM

Elli Ponomareva
Native Tbilisians or Diaspora: Negotiating the Status
of Armenians in Tbilisi 117

Syuzanna Barseghyan
The Role of Armenian Press in Reproduction and Dissemination
of Ethnic and Cultural Values in the Diaspora 142

WAR AND FORCED MIGRATION

Shushanik Ghazaryan
The Importance of Armenian Language in the process of integration
of Armenian refugees from Azerbaijan in Republic of Armenia 152

Hasmik Grigoryan
From The Armenian Genocide to the “4-Day War”
Cultural Factors of Violence Legalization 163

Lusine Tanajyan
Social-professional Features of Integration of Syrian-Armenian
Immigrants in Armenia 184

Sona Nersisyan
Network Relations among Syrian-Armenian Immigrants in Armenia 195

ARCHAEOLOGY

Roman Hovsepyan
Archaeobotanical sampling: Instructions for fieldwork 212

Artur Petrosyan
Methodology for the Study of Stone Artefacts 217

Anna Azizyan
Remarks on the Rare Ornaments of Kura-Araxes Ceramics of Armenia 238

Avetis Grigoryan
The History of Investigation of Antique
and Medieval Sites of the Sotk Region 249

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԱՐԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ



CULTURAL ANTHROPOLOGY

8

Հասմիկ Գրիգորյան

Հնագիտության և ազգագրության ինստիտուտ, ՀՀ ԳԱԱ

Հայոց ցեղասպանությունից մինչև «քառօրյա պատերազմ». բռնության օրինականացման մշակութային գործոնները

2016 թ. ապրիլի 2–5-ը ղարաբաղյան շփման գծում տեղի ունեցան ռազմական գործողություններ (հայտնի է «քառօրյա պատերազմ» անունով), որի ընթացքում ադրբեջանական բանակի զինվորները խախտել են պատերազմական հանցագործությունների կանխարգելմանը, նման բռնությունների բացառմանն ու հումանիզմի հաստատմանը միտված մի շարք միջազգային կոնվենցիաներ: Մասնավորապես, նրանք գլխատել են Արցախի բանակի զինվորներին, խոշտանգել մարմինները, անդամահատել, այդ թվում կտրել են նաև մեծահասակ խաղաղ բնակիչների ականջները[1]:

Մի կողմ դնելով «քառօրյա պատերազմի» քաղաքական և ռազմական նշանակությունը՝ այս հոդվածում քննարկելու եմ ադրբեջանական զինուժի կողմից գործադրված խոշտանգման ձևերը՝ համեմատելով Հայոց ցեղասպանության ժամանակ, ինչպես նաև հայ-ադրբեջանական պատերազմի նախորդ փուլերում արձանագրված խոշտանգումների հետ՝ վերջինս դիտարկելով բռնության մշակույթի համատեքստում: Հայոց ցեղասպանության և հայ-ադրբեջանական կոնֆլիկտի ժամանակ կիրառված բռնությունների և հատկապես խոշտանգումների միջև համեմատության փորձը պայմանավորված է նրանով, որ վերոհիշյալ բռնությունները հայկական լրատվամիջոցներով, պաշտոնական ելույթներում և հանրային քննարկումներում համեմատվում էին «Իսլամական պետության» ոճին հատուկ բռնարարքների հետ, նույնացվում էին «թուրքական մեթոդի» կամ «թուրքական դաժանությունների» հետ: Ընդ որում նույնացվում են նաև թուրք և ադրբեջանցի ժողովուրդները: Այս երևույթը հետաքրքրական է նրանով, որ բռնության այս կամ այն ձևերը պաշտոնական և հանրային քննարկումներում ստանում են «պատկանելիության» կարգավիճակ: Միաժամանակ կարևորվում է այն հանգամանքը, որ նման դաժանությունները սովորաբար բնորոշ են ցեղասպանական կամ դրան հավասարվող գործողություններին, և զուգահեռներ ունի Կոսովոյի, Բոսնիայի, Սինջարի, Ռուանդայի և ժամանակակից կյանքում գրանցված այլ ցեղասպանական գործողությունների հետ, երբ թշնամին զատորոշվում է ինքնությամբ:

Պաշտոնական հայտարարությունների, օտարերկրյա և հայ ականատեսների ու վերապրողների վկայությունների վրա հիմնվելով՝ հոդվածում ներկայացնում

---

1 Վերոնշյալ գործողություններով խախտվել են մասնավորապես 1949 թ. ընդունված ժնևյան չորս կոնվենցիաների ընդհանուր երրորդ հոդվածի ա կետը, համաձայն որի արգելվում են՝ ոտնձգությունը կյանքի և ֆիզիկական անձեռնմխելիության նկատմամբ, մասնավորապես, ամեն տեսակի սպանությունները, խեղումները, դաժան վերաբերմունքը, տանջահարությունը և խոշտանգումները (Geneva Convention 1952: 37): 1977 թ. դրան կից ընդունված երկրորդ արձանագրության երրորդ հոդվածի երկրորդ մասի հատկապես ա կետի համաձայն արգելվում է ոտնձգությունն անձանց կյանքի, առողջության, ֆիզիկական և հոգեկան վիճակի նկատմամբ, մասնավորապես, սպանությունը, ինչպես նաև այնպիսի դաժան վերաբերմունքը, ինչպիսին տանջահարությունն է, խեղումներ պատճառելը կամ մարմնական պատիժների ցանկացած ձևերը (Protocols Additional 2010: 54):

եմ թուրք-ադրբեջանական «բռնության մշակույթի» տիպաբանությունը (հիմնական ընդհանրությունները) Հայոց ցեղասպանության և հայ-ադրբեջանական կոնֆլիկտի համատեքստում: Չբացառելով հոդվածում քննարկվելիք բռնության ձևերի ունիվերսալությունը՝ փորձել եմ «թուրք-ադրբեջանական» օրինակով ներկայացնել, թե ինչ մշակութային գործոններով են օրինականացվում դրանք և պարբերաբար վերարտադրվում տվյալ հասարակություններում:

Բանալի բառեր. *Հայոց ցեղասպանություն, հայ-ադրբեջանական կոնֆլիկտ, «քառօրյա պատերազմ», բռնություն, օրինականացում:*

Hasmik Grigoryan

The Institute of Archaeology and Ethnography, NAS RA

From The Armenian Genocide to the "4-Day War" Cultural Factors of Violence Legalization

From the 2nd to the 5th of April of 2016 along the contact line of Nagorni Karabakh were executed military operations (also referred to as "The 4-Day War"), during which the soldiers of Azerbaijani army violated a number of international conventions, which are aimed at prevention of military crimes, exclusion of such kind of violence and establishment of humanism. Particularly, they behead the soldiers NKR defense army, tortured their bodies, amputated, including cutting off the ears of elderly peaceful villagers.[2]

Putting aside the political and military importance of "The 4-Day War" I am going to discuss in the article means of violence implemented by the Azeri soldiers by drawing parallels with the violence recorded during the Armenian Genocide, as well as during the previous stages of the Armenian-Azerbaijani war and considering the latter in the context of the culture of violence. The comparison between the violence and tortures in particular of the Armenian Genocide and of the Armenian-Azeri conflict is conditioned by the fact, that the above mentioned violence, according to Armenian press, social debates and official speeches are very typical to the style of "Islamic Republic", identified with "Turkish method" or "Turkish violence". Besides, Turkish and Azeri nations were identified as well. This phenomenon was interesting for the fact, that this or that kind means of violence got the status of "affiliation" in official and social discussions.

Meanwhile, it is important that such kinds of brutalities are usualy common to genocide or genocidal acts. It also has parallels to other genocidal acts in Kosovo, Bosnia, Sinjar, Rwanda and in ongoing contemporary genocidal acts, when the enemy is targeted by its ethnicity.

I introduce in the article the typography (main similarities) of Turkish-Azeri "culture of violence" in the context of the Armenian Genocide and Armenian-Azeri conflict by taking into consideration the testimonies found in the memoirs and reports of the foreign officials, survivors and witnesses. Without excluding the universality of means of

2 With the above mentioned actions have been violated the following provisions in particular: The a) clause of the general 3rd article of “4 Geneva Conventions” of 1949, according to which infringement upon somebody's life and physical immunity, all kinds of murders, mutilations, violent behavior, tortures, torments are forbidden (Geneva Convention 1952: 37). According to the a) clause of the 2nd part of the 3rd article of the 2nd record attached to the above mentioned convention adopted in 1977, it is forbidden violating other people’s lives, health, physical and mental state, murder in particular, as well as cruel treatment, such as torture, amputation, or any kind of corporal punishment (Protocols Additional 2010: 54).

violence discussed in the article, I have tried to introduce through Turkish-Azerbaijani example the cultural factors by which they are legalized and periodically reproduced in those societies.

Key words: *The Armenian Genocide, Armenian-Azerbaijani conflict, "4-day war", brutality, legalization.*

Асмик Григорян

От Геноцида армян до «4-дневной войны»: культурные факторы легализации насилия

В статье представлена типология турко-азербаджайнской «культуры насилия» в контекстах Армянского геноцида и армяно-азербаиджанского конфликта. На турко-азербаджайнской примере я попыталась показать, какими культурными факторами происходит их легитимизация и воспроизведение. Я заключаю, что насилие остается актуальным в среде вооруженных группировок, так как легитимизируются государством.

Ինչ է «բռնության մշակույթը»

Բռնությունը որպես մարդու գործունեության ձև և գործնականում կիրառվող թերևս նաև սոցիալական փորձ, գործադրվում է ինչպես անհատի, այնպես էլ մարդկանց մեծ խմբերի նկատմամբ: Պայմանավորված սոցիալական փորձով՝ ժողովուրդների մշակութային գործունեությունը, այդ թվում նաև բռնությունը, ունի առանձնահատկություններ: Բռնության մշակույթը մարդու կամ հասարակության նկատմամբ բռնարարքների թույլատրելի նորմերի և մշակութային տեքստերի համակարգ է, որը կանոնակարգում է այդ գործողությունները, թույլատրում կամ արգելում բռնության ձևերը, հաստատում բռնության իրականացման գործընթացը, բռնության սուբյեկտների, ինչպես նաև սուբյեկտների և օբյեկտների, սուբյեկտների ու հասարակության միջև փոխհարաբերությունները: Այդ համակարգը կանոնակարգում է նաև բռնության ձևերի սեմիոտիկան, որը խորհրդանշում է բռնության գործողությունները և մարդու պատկանելիությունը համապատասխան խմբավորմանը (Флиер 2007: 57-59): Մշակութային համակարգի վրա հիմնված բռնություններն անվանում են նաև կառուցողական, քանի որ իրենց մեջ կրում են որոշակի գաղափարախոսություն և արդարացվում են մշակութային գործոններով (Galtung 1990: 291-292):

Փիլիսոփայական գիտությունների դոկտոր Անդրեյ Ֆլիերը բռնությունների հիմքում տեսնում է բացառապես մշակույթը, որով պայմանավորում է պատերազմներն ու մարդկանց զանգվածային ոչնչացումները, քանի որ դրանք միտված են մշակութային ինքնության պահպանմանը՝ օտար մշակույթների մերժման/ոչնչացման միջոցով: Նա անհրաժեշտ պայման է համարում դաժանությունը, որով արտահայտվում է մարդու ոչնչացման գործընթացի ողջ սիմվոլիկան (Флиер 2012: 21): Բռնության ամենացայտուն օրինակը, որի հիմքում ընկած է մշակույթը, ծիսական զոհաբերություններն են: Զոհաբերությունը, դրա ծիսականացումը, պատիժը և օրենքներն ունեն միևնույն նպատակները՝

ուղղված են ազգի (ինքնության) միասնականությանը (Жирар 2000: 15): Այս գործընթացի մյուս սլաքն այն է, որ ծեսն իր մեջ կրում է բռնության ատրիբուտներ (Жигульский 1985: 93-100):

Այլ կերպ ասած՝ տարբեր հասարակություններում հաստատված են բռնության իրենց հատուկ որոշակի ձևերը, որոնք արտահայտում են տվյալ հասարակության աշխարհընկալումը (Singer 1989: 267): Վերջինս շատ լավ երևում է պատերազմների ժամանակ թշնամուն ոչնչացնելու և սահմանված պատիժների համատեքստում, որոնք մինչև 20-րդ դարն առանձնանում են յուրահատուկ դաժանությամբ, ինչը նույնիսկ այսօր պահպանվել է որոշ ժողովուրդների մոտ:

Բռնությունների մասնավոր դիտարկումները և դրանց մշակութային հիմքերը

Աղյուսակ

Թուրք-ադրբեջանական բռնության տիպաբանությունը Հայոց ցեղասպանության և հայ-ադրբեջանական կոնֆլիկտի համատեքստում	
1915-1916 թթ. Հայոց ցեղասպանություն	Մարմինների խոշտանգում՝ կենդանի մարդկանց և դիակների գլխատում, վերջույթների անդամահատում, ականջ և քիթ կտրել, սեռական օրգանների խեղում, աչք հանել, կտրված գլուխները և մարդկանց ցցերի վրա հանել, ողջակիզում, բռնությունները խաղերի, վիճակահանության վերածել, տոնական բնույթ հաղորդել ևն, դաժանությունների հանրային ցուցադրում, դաժանություններին քաղաքացիական անձանց մասնակցության ներքաշում:
1988-94 թթ. հայ-ադրբեջանական կոնֆլիկտ	Մարմինների խոշտանգում՝ գլխատում, ականջ և քիթ կտրել, սեռական օրգանների խեղում, աչք հանել, ողջակիզում, տոնական բնույթ հաղորդել: Դաժանությունների հանրային ցուցադրում, դաժանություններին քաղաքացիական անձանց մասնակցության ներքաշում:
2016 թ. «Քառօրյա պատերազմ»	Մարմինների խոշտանգում՝ գլխատում, ականջ կտրել, դիակների մասնատում:

Կենդանի մարդկանց և դիակների գլխատում

Հայոց ցեղասպանության և հայ-ադրբեջանական պատերազմի ժամանակ հանդիպող խոշտանգման ձևերից էր կենդանի մարդկանց կամ դիակների գլխատումը: Ուշագրավ է, որ թշնամուն գլխատելուց հետո հաճախ գլուխը պտտեցնելով բնակավայրերում ցուցադրում էին հասարակությանը, իսկ Հայոց ցեղասպանության ժամանակ որպես սպառնալիք և զգուշացում հայ հասարակությանը կտրված գլուխները ցցի էին հանում և շարում այն ճանապարհներին, որտեղով անցնելու էին հայ գաղթականները: Բազմաթիվ օրի-

նակներից ներկայացնենք միայն մի քանիսը՝ ասելիքը փաստագրելու և առավել պատկերավոր դարձնելու համար: Երզնկայի կոտորածները վերապրած Լևոն Ֆապրիքաճյանն[3] (1985: 56) իր հուշագրության մեջ պատմում է.

> *«[Եփրատի մուրակայքում] հանդիպեցինք ցիցերի, որոնց ծայրերին անցկացված էին մարդկանց գլուխներ: ...[Քարավանապետը] կապաղած գազանի նման սուրը մեջքից քաշեց և չորս քահանաների մոտ վազելով՝ սկսեց անխնա դաշունահարել, որից հետո ժանդարմներին կանչեց ու նրանց մարմինները կտոր-կտոր անել տվեց, իսկ նրանց գլուխներն էլ սվինների ծայրը անցկացրեց, մեզ ցույց տվեց...»:*

Հայոց ցեղասպանությունը վերապրածների հուշագրություններում կան բազմաթիվ վկայություններ ոչ միայն կտրված գլուխները ցցերի վրա հանելու, այլև կենդանի մարդկանց ցից հանելու մասին: Երզնկայի կոտորածները վերապրած Եպրաքսե Եանգյանը պատմում է, որ 1915 թ. մայիսի 26-ին Կամախի կիրճում երկու ժանդարմ սվինահարելով սպանել են Արամ Գասպարյանին և առևանգել նրա կնոջը: Նրանց վեց տարեկան զավակին հետևից անցկացրել են ձողի վրա և ժողովրդին ցուցադրելով բացականչել՝ «ահա ձեր դրօշակը» (Յուշամատեան Մեծ Եղեռնի 1965: 539): Իսկ Բիթլիսի նահանգի կոտորածը վերապրած Խաչիկ Վարդանյանը վկայում է. «*Յղի կիներու փորը կը ճեղքէին և զաւակները հանելով, ձողի մը ծայրը կը ցցէին և կը պոռային, թէ «սա հայու դրօշակ է»*» (Հայոց ցեղասպանությունը Օսմանյան Թուրքիայում-2 2012: 121):

Նման վարքային դրսևորումներ են հանդիպում նաև ադրբեջանցի զինվորների կողմից 1990-ականների պատերազմի ընթացքում՝ մասնավորապես Մարտակերտի շրջանի Մարաղա հայկական գյուղում[4]: Մարաղայի ջոկատի հրամանատարի օգնական Վ. Ավագյանը վկայում է.

> *«...այդքան գազանություններ ես կյանքում չեմ տեսել, ճիշտա, լսել էինք, կարդացել թերթերում, բայց ես առաջին անգամն եմ տեսնում, որ մարդկանց վիզերը կտրած դեն գցած, առանց գլխի մարդ, աչքերը հանած, ականջը, քիթը կտրած: Այդ բոլորը կատարվել է մեր աչքերի առաջ, մեր գյուղում»* (Maragha 1992: http://maragha.org/video.html):

Բարոնուհի Քերոլայն Քոքսը Մարաղայի մասին իր տված հարցազրույցում հատկապես անդրադառնում և շեշտադրում է ադրբեջանցիների գործադրած բռնությունները տեղի ժողովրդի նկատմամբ.

---

3 Ծնվել է 1905 թ. Կարին քաղաքում: Հուշագրությունը գրի է առել 1923 թ.:

4 1992 թ. ապրիլի 10-ի առավոտյան ադրբեջանական կանոնավոր զորամիավորումները մտնում են Մարաղա հայկական գյուղը: Համաձայն Վ. Ավագյանի վկայության՝ այնտեղ տեղակայված հայկական ջոկատը պաշտպանվում է մոտավորապես վեցը ժամ, որից հետո ստիպված են լինում նահանջել: Շրջանի պաշտպանության ղեկավարության կողմից օգնության հասնելուց հետո 4-5 ժամվա ընթացքում թշնամին կրկին հետ է շպրտվում: Տես՝ 1992 թ. ապրիլի 11, Մարաղա: Նկարահանել է Բենիկ Կարախանյանը, 9 ր. 40 վ., (Maragha 1992: http://maragha.org/video.html)

«…Երբ մենք գնացինք այնտեղ, տեսանք բնակիչների կտրած գլուխներ: Ես այդ ամենը տեսել եմ սեփական աչքերով, մարդկանց մարմինների կտրատված մասեր՝ թափված գետնին: Նրանք նույնիսկ կենդանի մարդկանց են վառել, ես տեսել եմ վառված կնոջ մասունքներ: …Մարաղայի դեպքերից հետո, ես այնտեղից գնացի Մարտակերտի հոսպիտալը և ծանոթացա գլխավոր բուժքրոջ հետ: Այդ օրը ադրբեջանցիները գլխատել էին նրա որդուն և սպանել նրա ընտանիքի տասնչորս անդամներին» (Maragha 1992: http://maragha.org/video2_ar.html):

Ադրբեջանցի զինվորների կողմից վարքային նույն դրսևորումներն ենք տեսնում նաև 2016 թ.: Ապրիլի 1-ի լույս 2-ի գիշերը Մատաղիսում տեղի ունեցած մարտական գործողությունների ժամանակ զոհված եզդի Քյարամ Սլոյանը գլխատվել էր ադրբեջանական բանակի զինվորների կողմից, ապա գլուխը տարվել է ադրբեջանական գյուղեր և ի ցույց դրվել հանրությանը: Զինվորները, ինչպես նաև՝ քաղաքացիական հագուստով անձինք, լուսանկարվել են Ք. Սլոյանի կտրված գլխի հետ, տեսանկարահանել գյուղերում պտտեցնելու արարողությունը և տարածել համացանցում (Karabakh Conflict 2016):

Ապրիլի 14-ին ԵԱՀԿ մշտական Խորհրդի նիստին Հայաստանի առաքելության ղեկավար, դեսպան Արման Կիրակոսյանը, անդրադառնալով Ադրբեջանի կողմից միջազգային հումանիտար իրավունքի խախտումներին, ընդգծել է, որ «զինվորականներ[5] Հայկ Թորոյանը, Հրանտ Ղարիբյանը և Քարամ Սլոյանը գլխատվել են ադրբեջանցի զինվորականների կողմից «Իսլամական պետություն» ահաբեկչական կազմակերպությանը բնորոշ ոճով» (դեսպան Կիրակոսյանի 2016): Գլխատումների մասին փաստել է նաև հայ 18 զինվորների խոշտանգումների վերաբերյալ հարցերով զբաղվող «Ընդդեմ իրավական կամայականության» հասարակական կազմակերպության ղեկավար Միքայել Արամյանը (…Իրավապաշտպան 2016):

20-21-րդ դարում թուրքերի և ադրբեջանցիների կողմից գործադրվող բռնության այս ձևը համամարդկային վարքի ընդհանրական է, որն ունի խոր արմատներ: Դեռևս հազարամյակներ առաջ *գլուխների որսը* հատուկ գործունեություն էր: Ձեռք բերված գլուխների քանակը ցուցում էր ռազմական առավելությունները և սոցիալական ստատուսը (Назаретян 2007: 54): Գոյություն են ունեցել նաև թագավորների հատուկ վարքականոններ ռազմի դաշտում, որոնք իրենցից ներկայացնում են ռազմական ծեսեր: Այդ ծեսերն իրականացվում էին ինչպես պատերազմի գնալիս, այնպես էլ վերադառնալիս: Դրանցից մեկն այն է, որ թագավորը ոտքով կանգնում էր գերիների գլխին՝ ցուցելով իր հաղթանակը (Емельянов 2003: 165): Հնագույն ժամանակներում ընդունված էր նաև պատերազմից վերադառնալիս բերված թշնամու կտրված գլուխների

5 Թորոյան Հայկ Վահանի, մայոր, 1985-2016, Երևան: Ղարիբյան Հրանտ Սամվելի, պայմանագրային շարքային, 1947-2016, Ստեփանակերտ: Սլոյան Քյարամ Քալաշի, շարքային, 1996-2016, Արտաշավան:

նկատմամբ ծիսական արարողություններ կատարել՝ թշնամու ուժը համայնքում պահելու համար (Ֆրեզեր 1989: 593-609): Հետաքրքրական է, որ այդ ծեսերում կա նաև կտրված գլուխների բերաններում ծխախոտ դնելու սովորույթը[6], ինչը հանդիպում է նաև Հայոց ցեղասպանության ժամանակ՝ մեկ անգամ ևս փաստելով, որ այդ բռնությունները կրում էին ծիսական տարրեր (Սպիրով 2000: 340; Գուստ 2008: 340): Գլխատումների հետ կապված մեկ այլ արարողակարգ էր դրանք հասարակական վայրերում (որպես կանոն հրապարակներում) իրականացնելը, կտրված գլուխները հասարակությանն ի ցույց դնելը կամ բնակավայրերով պտտեցնելը: Սրանով ողջ հասարակությանը մասնակից էին դարձնում իրականացված գործողություններին (Логинов 2016):

Անդամահատումներ

Ծիսականացված բռնությունների մյուս ձևը, որը հանդիպում է և՛ Հայոց ցեղասպանության, և՛ հայ-ադրբեջանական պատերազմի ժամանակ, զոհերի մարմինների խոշտանգումն է, հատկապես վերջույթների անդամահատումը, ականջ կտրելը, սեռական օրգանների խեղումը և այլն:

Հայոց ցեղասպանության վերապրողներից եպիսկոպոս Գրիգորիս Պալաքյանն (1922: 127) Անկարայի կոտորածի ժամանակ իրականացված մարմինների մասնատման մասին վկայում է.

> *«Գարնան ծառերը ինչպէս կը յօրեն յաւրոցով, արիւնածարաւ ամբոխը կացիններով, սակրերով, բահով ու բրիչով յարձակելով թշուառ կիներու և երեխաներու 400 է աւելի աս խումբին վրայ՝ կը սկսին չարչարանօք կուրրուել և կտրուել ասոնց մարմիններուն դուրս մնացած բոլոր մասերը, քիթ, ականջ, ոտք, ձեռք, մատներ, ուսեր...»:*

Մեկ այլ վերապրող Նշան Աբրահամյանը[7] Վանի Ջիրաքլու գյուղում հայերի դիամասնատման մասին վկայում է հետևյալը.

> *«Գլուխները կտրել էին, ուղիղ մի գծի վրա դրել, մարմինները՝ մի... Դրանց վրա զազրելի բաներ էին արված: Մեկի մի աչքը հանած, քիթը կտրած, ականջը կտրած, ազդրերին գրպաններ բացած՝ ձեռքերը մեջը խցկած, անդամը բերանը դրած...»* (Սվազլյան 2011: 155, 185, 263, 290; Հայոց ցեղասպանությունը Օսմանյան Թուրքիայում-1 2012: 78-79):

Կրկին անդրադառնալով Մարաղայում տեղի ունեցած ռազմական հանցագործություններին, նշենք, որ մեկ օրվա ընթացքում ադրբեջանական բանակը հրկիզում է բնակարանները, ողջակիզում մարդկանց և բռնության տարբեր ձևեր կիրառում: Մարաղայում սպանվել է 57 խաղաղ բնակիչ, որոնք բոլորն էլ ենթարկվել են կոտտանքների: Ադրբեջանցի զինվորները մասնատել,

---

6 Ենթադրում եմ, որ այս երևույթն աղերսներ ունի թշնամուն հյուրասիրելու միջոցով նրա ուժը համայնքում պահելու սովորույթի հետ:

7 Ծնվել է 1908 թ. Վանի Արծկե գավառի Ջիրաքլու գյուղում: Հիշողությունները գրի են առնվել 1997 թ. Երևանում:

հրկիզել և խոշտանգել են արդեն մահացած մարդկանց դիակները (Мелик-Шахназарян 1997): Այս մասին տեղեկություններ կան նաև հիշատակված Վ. Ավագյանի վկայության մեջ: Ֆ. Քոքսն իր տված հարցազրույցում հատկապես շեշտադրում է ականջ կտրելու փաստը. «*…Ես ունեմ նկարներ, որոնց վրա պատկերված են գլխատված, անդամահատված դիակներ, մարդկանց մոխրացած մասունքներ: Եվ կա մի սառմոկեցուցիչ լուսանկար, որի վրա մի ծերուկ է՝ ձեռքում բռնած հարևանի ականջը*» (Maragha 1992: http://maragha.org/video2_ar.html):

Ադրբեջանական բանակի զինվորների կողմից ապրիլյան «քառօրյա պատերազմի» ժամանակ գործադրված առաջին բռնությունը, որ հայտնի դարձավ, Թալիշի համայնքի մեծահասակ խաղաղ բնակիչների սպանությունն էր և նրանց ականջները կտրելը: Համայնքի ղեկավար Վիլեն Պետրոսյանն ապրիլի 4-ին հաղորդել է. «*Ադրբեջանական զորամիավորումները երեկ գյուղում գնդակահարել են Թալիշի բնակիչ Վալերա Խալափյանին և նրա կնոջը՝ Ռազմելային, կտրել են նրանց ականջները*» (Թալիշում… 2016):

Բռնության ծիսականացումն իր սիմվոլիկայով ոչ միայն միտված է թշնամու նկատմամբ հաղթանակի ամրագրմանը, ինչպես գլխատման պարագայում, այլև «մեղավորներին» ու «դավաճաններին» պատժելով՝ հաստատում է «արդարադատություն» (Тард 1902: 47): Այսպիսի պատժի ձևերից են հատկապես ձեռք կամ ականջ կտրելը:

Մարմինների խոշտանգման մեկ այլ դրսևորում է ինչպես կանանց, այնպես էլ տղամարդկանց սեռական օրգանների խեղումը: Կանանց բռնաբարելուց հետո ոճրագործները մասնատում էին նրանց մերկ մարմինները, տաքացած ունելիներ մտցնում ստինքները, կտրում կրծքերը, սեռական օրգանները, դագանակներ մտցնում հետանցքները: 1910 թ. Սամսոնում ծնված Մեսրոպ Մինասյանը[8] պատմում է. «*Կույս աղջիկների կրծքերի պտուկներն էին կտրում, իսկ կանանց կրծքերը կտրում, գցում էին նրանց ուսը*» (Սվազլյան 2011: 353, 145, 359, 461): Հայոց ցեղասպանությունը վերապրած հրապարակագիր Արամ Անտոնյանն (1990: 98) այս առնչությամբ վկայում է.

> *«Պապի[9] բնիկները, ովքեր այդ անապատների ամենասրտորին ժողովուրդն էին, նույնիսկ մեռելներին չէին հարգում: Խումբ-խումբ գալիս էին, դիակների շուրջն էին խմբվում, նրանց սեռական օրգանները կտրում էին»:*

1988 թ. սումգայիթյան ջարդերի ժամանակ էլ մեծ հետաքրքրություն կար սեռական օրգանների նկատմամբ՝ կուրծքը կտրելը, կենդանի կանանց, մահացածների հեշտոց սուր երկաթի կտորներ մտցնելը, առհասարակ «ռիմակի» մեջ կանանց սեռական օրգանների ցուցադրությունը (Խառատյան 2006)[10]:

---

8 Հուշագրությունը գրի է առնվել 1998 թ. Երևանում:

9 Պապ (Բաբ)՝ քաղաք Կիլիկիայի Ադանա (Հալեպ) նահանգի Ադանա գավառում:

10 Շնորհակալություն ենք հայտնում Հ. Խառատյանին ձեռագիրը տրամադրելու համար:

Կանանց նկատմամբ նման բռնությունները հավանաբար պայմանավորված են կնոջ վերարտադրողական գործառույթի մասին պատկերացումներով, իսկ տղամարդկանց սեռական օրգանների խեղմամբ վիրավորում էին տղամարդկային արժանապատվությունը՝ այդպիսով մեկ անգամ ևս փաստելով իրենց հաղթանակը, քանի որ թշնամու նկատմամբ տարած հաղթանակի ցուցիչներից մեկն էլ վերջինիս նվաստացման գործողություններն են (Емельянов 2003: 168): Այսինքն՝ սեռական օրգանների խեղմամբ նաև սիմվոլիկ ձևով էին ոչնչացնում կանացիությունն ու տղամարդկայնությունը (արականությունը): Օրինակ, հնագույն ժամանակներում հայտնի էին ցեղեր, որտեղ երիտասարդը կարող էր ամուսնանալ միայն այն պարագայում, որ թշնամու կտրված գլուխ կնվիրեր հարսնացուին, իսկ որոշ տեղերում՝ հարևան ցեղախմբի տղամարդու սեռական օրգանները (Назаретян 2007: 54): Ենթադրում եմ, որ վերջինս ցուցում էր փեսացուի առնականությունը, ինչպես նաև՝ ամուսնության պատրաստ լինելը, քանի որ, եթե թշնամու կտրած գլուխը վերցնելը նշանակում էր վերցնել նաև նրա ուժը, ձեռք բերել ռազմական ավելի բարձր կարգավիճակ, ապա սեռական օրգանների դեպքում՝ հավանաբար ենթադրում էր վերցնել նաև սեռական ուժը, իսկ պարզապես խեղման պարագայում՝ նշանակում է ոչնչացնել այն:

Բռնություններին տոնածիսական բնույթ հաղորդելը

Վերոնշյալ բռնությունները, այդ թվում նաև ողջակիզումները, հաճախ ուղեկցվում էին ծիծաղով, երաժշտությամբ, պարերով, խաղերով և վիճակահանությամբ, մասնավորապես Հայոց ցեղասպանության ժամանակ: Սա, թերևս, պայմանավորված է նրանով, որ ցեղասպանության ժամանակ ավելի մեծ հնարավորություն կար նման վարքի դրսևորման համար, քան զինված կոնֆլիկտի:

Ոճրագործները վիճակահանությամբ էին ընտրում գեղեցիկ աղջիկներին, ինչպես նաև որոշում հոի կանանց երեխայի սեռը և այլն (Սվազլյան 2011: 298, 353, 388, 403): Տեղահանության ճանապարհին ոստիկանների գործադրած տարաբնույթ բռնությունների վերաբերյալ ակնցի Գեորգ Աբելյանն[11] իր հուշագրության մեջ պատմում է 1907 թ. Ակնում ծնված Հակոբ Դանիելյանի մասին և շարադրում նրա տեսածները Եփրատի ափին.

> *«Յակոբ դեռ չէր գիտեր, թէ ինչ ըսել էր յղիութիւնը: Ոստիկաններ խոշոր փորով կին մը կանգնեցուցին: Իրարու հետ կը վիճէին, մինչ կինը կը փորձէր փորը ծածկել երկու ձեռքերովը: Ոստիկանները գրաւի եկած էին: Մէյ մը ն ալ սուրը շողաց և խրուեցաւ կնոջ փորին մէջ: ...Մէկ ալ սուրին ծայրը տեսնուեցաւ փոքր պեպեք [երեխա] մը ...այն ոստիկանը որ պնդած էր, թէ հայ խոզին փորին մէջինը մանչ էր, շահած էր գրաւը...»* (Աբէլեան 2010: 18):

11 Ծնվել է 1907 թ. Ակնում:

Հատկապես Վանի և Բիթլիսի նահանգներում լայն տարածում գտած ողջակիզումները նվագակցությամբ ու պարերով ուղեկցելու մասին է վկայում նաև Մեծ եղեռնի ժամանակ Բիթլիսի կոտորածները վերապրած Սեդրակ Ամիրյանը: Նա հավաստում է, որ Մուշի Վարդենիս գյուղի շրջակա բնակավայրերի բնակչությանը լցրել են Ավզուտ գյուղի գոմերը և այրել, իսկ Մուսա բեկը դրսում թմբուկ, զուռնայի երաժշտության ներքո պարել է և ասել՝ «*...եթէ հայերն ասպրուած ունին, թող զիս քարացնի այսրեղ*» (Հայոց ցեղասպանությունը Օսմանյան Թուրքիայում-2 2012: 270):

Սումգայիթի ջարդերը վերապրած Բերդյան Բարմենը բռնությունները նվագակցությամբ ուղեկցելու մասին պատմում է. «*Բացեցին դաշնամուրը, և ինչպես ես հասկացա, նրանցից մեկը երաժշտական կրթություն ուներ, քանի որ իրենց երաժշտությունն ու երգերը լավ էին նվագում*» (Шахмурадян 1989):

Ընդհանրապես, խաղերի ու բռնության միջև գոյություն ունեցող կապը պայմանավորված է նրանով, որ խաղում պարտվածի նկատմամբ պատիժ է սահմանվում և, որպես կանոն, բռնության թիրախն ընտրվում է վիճակահանությամբ (Рахимов 2001: 427-431): Ծիսական պարերը, երգերը, նվագակցությունը ևս հատուկ են պատերազմում հաղթանակ տանելու կապակցությամբ կատարվող տոնահանդեսներին, որով ամրապնդվում է հաղթանակը և հետագա անվտանգությունը: Բռնության ծիսականացման կարևոր գործառույթներից է այն, որ որոշակիորեն տաբու է դրվում ոճրագործություն իրականացնող խմբի անդամների միջև հնարավոր պայքարի վրա (Chirot and McCauley 2010: 52-53): Փաստորեն, բռնության ծիսականացմամբ ամրապնդվում է «ոճրագործ խմբի» միասնականությունը և վերացվում դիմադրություն ցուցաբերելու հնարավորությունը: Ծիսականացված վարքին հատուկ համընդհանուր ծիծաղը, ուրախությունը, ծաղրը, աղմուկը, երաժշտությունը, պարը միավորում են խմբի անդամներին, որոնց շնորհիվ յուրաքանչյուր անդամ զգում է իր միասնականությունը մյուսների հետ և շեշտվում է ընդհանրության՝ «մենքի» զգացումը (հմմտ. Элиаде 1998: 163-164; Абрамян 1983: 31-47): Հատկանշական է, որ հատուկ դաժանությամբ բռնությունները, մեզ հայտնի դեպքերում, համարյա միշտ խմբային է: Միայնակ բռնացողը սովորաբար պարզապես սպանում է զոհին: «Դաժանության հաճույք»ը առնվազն ականատես է պահանջում, իսկ ավելի սուրը, կարևորը և «ճիշտ»-ը՝ դաժանության ակտի խմբային մասնակցություն: Սա, թերևս, փաստում է, որ «Դաժանության հաճույք»-ը կոնֆլիկտի և թշնամության դեպքում ոչ թե սադիզմ է, ինչն անձի անհատական հատկանիշ է, այլ սոցիալական գործառույթ, տվյալ դեպքում՝ «մենք»-ի ինքնահաստատման ձև:

Բռնության օրինականացման մշակութային գործոնները

Թուրք-ադրբեջանական զինված խմբավորումների կողմից[12] բռնությունների մասին խոսելիս առաջին հարցը, որին բախվում ես, այն է, թե ինչու՞ այդքան դաժան: Ինչու՞ են «արքետիպային» թվացող այս բռնությունները շարունակում արդիական մնալ թուրք-ադրբեջանական հասարակությունների զինված խմբավորումներում:

Ընդհանրապես բռնության ուսումնասիրությունը վերաբերում է երկու տեսակի խնդիրների քննարկմանը՝ բռնության կիրառմանը և վերջինիս օրինականացմանը (Galtung 1990: 291-292): Նախորդ բաժնում ներկայացրեցինք թուրք-ադրբեջանական զինված խմբավորումների կողմից բռնության ձևերը, այժմ անդրադառնանք դրանց օրինականացման մշակութային գործոններին:

Բռնության օրինականացման գործընթացը տեղի է ունենում սոցիալ-հասարակական կյանք մշակութային մոդելներով որոշակի գաղափարների ներմուծման միջոցով, որոնցով արդարացվում և լեգիտիմացվում են հակամարտությունների և պատերազմների ժամանակ մարդ սպանելը կամ բռնություն գործադրելը: Այս տեսակի բռնությունները պարզ մարդասպանությունից տարբերվում են նրանով, որ հաճախ քաղաքական, ռազմական կամ հոգևոր էլիտայի կողմից խրախուսվելով՝ դառնում են ընդունված ու ընդօրինակելի նորմ, ամրապնդվում է մարդկանց քաղաքական պատկերացումներում և ձևավորում նրանց քաղաքական վարքագիծը: Այս պատճառով անհրաժեշտ է, որ ներքին կամ արտաքին թշնամու նկատմամբ իրագործվող բռնությունները նախ և առաջ պրոեկտվեն և օրինականացվեն պետական գաղափարախոսությամբ՝ դառնալով հավատալիքների ու համոզմունքների կուռ համակարգ: Անշուշտ, մեկ հոդվածի սահմաններում բոլոր գործոններին չեմ կարող անդրադառնալ, բայցևայնպես, ստորև ներկայացնում եմ մշակութային այն հիմնական հնարքները, որոնցով իշխանությունները կամ կազմակերպիչներն արդարացնում և օրինականացնում են բռնությունները:

Մշակութային մոդելներից մեկը, որի շրջանակներում դաժանությունը ռացիոնալիզացվում է, էթնիկ/ազգային ինքնության ձևավորման/ամրապնդման և վերջինիս դոմինանտության հաստատման ձգտումն է: Կրկին հանգում ենք նրան, որ բռնությունը միտված է ազգի ձևավորմանը/ամրապնդմանը և միասնականությանը: Օսմանյան կայսրությունում երկար ժամանակ խմորվող այս գործընթացը «Միություն և առաջադիմություն» կուսակցության՝ 1908 թ. իշխանության գալուց հետո վերածվեց պանթյուրքական պետական գաղափարախոսության: Վերջինս ընթանում էր թյուրքական մշակույթի վերածննդի միջոցով էթնիկ միատարրության ստեղծման ուղղով, որն այլ ժողովուրդների նկատմամբ ստացավ բացահայտ ագրեսիայի ձև:

12 Կան բազմաթիվ վկայություններ այն մասին, որ Հայոց ցեղասպանության ժամանակ նման բռնություններ են գործադրել ոչ միայն ռազմական կամ ռազմականացված ինստիտուտները, այլև՝ շարքային քաղաքացիները:

Ադրբեջանում ևս ողջ 20-րդ դարը տրված էր ինքնության քննարկմանը և ամրապնդմանը, ուստի դարավերջին այն արդեն հասունացել էր (Харатян 2015)։ Ազգագրագետ Հ. Խառատյանը ցույց է տալիս, որ սումգայիթյան արյունահեղությունը, որը տարածվեց ողջ Ադրբեջանով, ևս «Նարոդնի ֆրոնտի» կողմից բացատրվում և արդարացվում էր ադրբեջանական «էթնիկ գաղափարախոսության ձևակերպման և ազգի ամրության նվաճման» մղումով՝ անկախ ստացված արդյունքներից (Խառատյան 2006)։

1. Գաղափարախոսության ձևակերպումից հետո այն կյանքի կոչելու համար թե՛ Օսմանյան կայսրությունում, թե՛ Ադրբեջանում մշակվեց թշնամի հայի կերպարը, ապա սկսվեց վերջինիս հասցեին մեղադրանքներ ներկայացնելը։ Կարևոր է նկատի ունենալ այն հանգամանքը, որ «թշնամու կերպարը» քաղաքականության մեջ արդեն դրսևորվում է որպես ոչ այնքան էթնոմշակութային աշխարհընկալում, որքան նպատակաուղղված շահարկման արդյունք։ Այստեղ մեծ դեր է խաղում պետական քարոզչամեքենան, որը ձևավորում է հասարակական կարծիք և ամենաթողության ու անպատժելիության մթնոլորտ՝ հաստատելով թշնամուն ոչնչացնելու անհրաժեշտությունը։

Օսմանյան կայսրությունում թշնամու կերպարի վերածված հայերը մեղադրվում էին դավաճանության, ապստամբության մեջ, ներկայացվում որպես թուրքերի հաշվին հարստացածներ, սպառնալիք տարածքային ամբողջականությանը, թուրքական ինքնությանը և այլն։ Հայերի նկատմամբ կիրառվող բոլոր բռնարարքները ներկայացվում էին որպես ապստամբների ու լրտեսների դեմ պայքար։ Այս մեղադրանքները շրջանառության մեջ էին դնում հիմնականում Ներքին գործերի և Ռազմական գործերի նախարարությունները։ 1915 թ. օգոստոսին Կ.Պոլսում Թալեաթ փաշան, իր մոտ հրավիրելով ԱՄՆ-ի դեսպան Հենրի Մորգենթաուին, ներկայացնում է Թուրքիայի կառավարության հակահայ քաղաքականության պատճառները՝ մատնացույց անելով հետևյալ երեք գործոնները՝ ա) հայերը հարստացել են թուրքերի կրած կորուստներով, բ) հայերը որոշել են անկախ պետություն ստեղծել և, վերջապես, գ) նրանք բացահայտ օգնել են երկրի թշնամիներին՝ ռուսներին, որով պատճառ են դարձել երկրի [ռազմական – Գ. Հ.] անհաջողություններին (Մորգենթաու 2012։ 252)։

Այս գործոններից առնվազն երկուսն ակտիվ գործողության մեջ էին դրվել սումգայիթյան ջարդերի կազմակերպիչների կողմից և ակտուալ մնացին հաջորդ չորս տարիների ընթացքում։ Նրանք իրենց կոչերում հղում էին կատարում այն «անարդար փաստին», որ հայերն Ադրբեջանում ապրում են ամենալավ տներում, զբաղեցնում են ամենալավ աշխատատեղերը, հարուստ են։ Հետևաբար ճիշտ ժամանակն է «արդարությունը վերականգնել»՝ խլել նրանցից տները և այնտեղ բնակեցնել Հայաստանից փախած ադրբեջանցիներին (Խառատյան 2006)։

2. Հաջորդ գործոնը, որով խրախուսվում էին բռնությունները Օսմանյան կայսրությունում, վերաբերում էր հայերի կողմից անկախության վերականգ-

ման սպառնալիքին: Նրանք մշտապես մեղադրվում էին նրանում, որ օգտվում են Արևելյան հարցի սրացումից և ապստամբություն բարձրացնում՝ նպատակ ունենալով անկախանալ և կայսրության կործանման վերջնական պատճառը դառնալ (Дадрян 2007: 282): Այս կապակցությամբ Օսմանյան կայսրությունում ամերիկյան թերթերի թղթակից, համիդյան կոտորածների ականատես Հերբերտ Ադամս Գիբոնսը գրում է. «*Սա Թուրքիայում հայերի կոտորածների մշտական բացատրությունն է: Մենք լսել ենք այդ 1895-96 թթ. և 1909 թ.: Մենք սա լսում ենք կրկին 1915 թ.*» (Gibbons 1916: 31): Հայերին վերագրված մեղադրանքների երրորդ գործոնը, ինչպես նշել եմ, հայերին դավաճանության մեջ մեղադրելն էր, ռուսական զորքին աջակցելը, ինչն իր բովանդակությամբ կրկին հանգում է տարածքային ամբողջականությունը կորցնելու վախին[13]: Դեսպան Վանգենհայմը Գերմանիայի ռայխսկանցլեր Բեթման Հոլվեգին զեկուցում է.

> *«Փաստ է, որ թուրք սպաները լավ չեն խոսում հայերի մասին և նրանց հանդիմանում են, թե նրանք ռուսների հանդեպ բարեկամաբար են տրամադրված և հեշտացնում են ռուսական զորքերի ներխուժումը թուրքական շրջաններ: Ինչպես երևում է տարբեր նախանշաններից կարծես թե նորովի է ժայթքել նաև հայերի հանդեպ թուրք բնակչության վաղեմի ատելությունը»* (Գուստ 2008: 149-150):

Հայ-ադրբեջանական կոնֆլիկտի պարագայում խոսքը վերաբերում էր Ղարաբաղի անկախացման մտավախությանը, որը վերաճեց հայերի կողմից «ադրբեջանական հողերի օկուպացման» թեմայի շրջանառությանը, այդ թվում նաև Նախիջևանի շրջափակմանը (Glossary of Hate Speech 2008-2013: 21):

Ադրբեջանցի լրագրողների, քաղաքական և պետական գործիչների, վերլուծաբանների կողմից հայերն ամեն կերպ բոլոր հնարավոր ամբիոններից ներկայացվում են որպես ագրեսորներ ոչ միայն ներքին, այլև միջազգային լսարաններում (Адибекян, Элибегова 2013: 90): Հայերի հասցեին հնչող մեղադրանքները չեն սահմանափակվում միայն Ղարաբաղի շուրջ ծավալված հակամարտությամբ: Նրանք մեղադրվում էին նաև «Ծովից ծով Հայաստան» ստեղծելու ձգտման, «Այսպես կոչված ցեղասպանությունների միֆեր» հորինելու և ագրեսիվություն ցուցաբերելու մեջ՝ նույնիսկ Թուրքիայի նկատմամբ (Насибова 2015; Glossary of Hate Speech 2008-2013: 18):

Փորձագետ Լ.Հակոբյանը, ուսումնասիրելով ադրբեջանական էլեկտրոնային մամուլը, նշում է, որ ադրբեջանական իշխանությունը, անընդհատ մեդիայում հղում կատարելով *թշնամի հային*, տագնապի ու լարվածության մթնոլորտում է պահում ադրբեջանական հասարակությանը՝ այն դարձնելով առավել վերահսկելի (Հակոբյան 2015):

---

13 Բացի այդ Օսմանյան կայսրությունում այդ ամենին գումարվում էր նաև այն, որ հայերը վաղուց արդեն արհամարհելի էին, ընկալվում էին որպես «գյավուր», «ռայա», «ոչ մարդ», «շներ», «մակաբույծներ», «շարժվող իրեր», «թափառական հրեաներ», ինչը դյուրացնում էր նրանց ոչնչացման գործընթացը:

Որպեսզի այս բոլոր մեղադրանքները մղեն կոնկրետ գործողությունների, արթնացնեն ատելություն և վրեժխնդիր լինելու ցանկություն, թե՛ թուրքական և թե՛ ադրբեջանական վերնախավը սեփական ագրեսիան բարդեց հայերի վրա:

Մեծ վեզիր Սայիդ փաշան 1915 թ. հունիսի 3-ին Հ. Մորգենթաուի հետ ունեցած զրույցի ժամանակ հայերին մեղադրել է Վանում 120.000 թուրքի սպանության մեջ (Մորգենթաու 2012: 266-268): Հայերի՝ թուրքերին կոտորելու մեղադրանքն առավել ակտիվացավ Էրզրումի վերագրավումից հետո (1916 թ. փետրվար), երբ թուրք հրամանատարները տեղեկագրեր էին հասցնում Կ.Պոլիս, թե նահանջող հայերը կոտորել են այդ կողմերի բոլոր մուսուլմաններին (Անտոնյան 1990: 227): Ադրբեջանցիների կողմից նման առասպելների շրջանառության մասին Հ. Խառատյանը գրում է.

> *«Սումգայիթում հենց սկզբից հրապարակ նետվեց «Հայաստանում ծեծված, ջարդված, բռնաբարված ադրբեջանցիների» առասպելը, որով միտինգի կարգադրիչները գրգռում էին հավաքվածներին՝ պահանջելով վրեժ լուծել ադրբեջանահայերին «արժանի» հակահարված տալով»* (Խառատյան 2006; Шахмурадян 1989):

3. Թշնամուն ոչնչացնելու անհրաժեշտությունը հաստատելուց հետո վերնախավը պարգևատրման ինստիտուտի միջոցով և սեփական վարքի օրինակով մատուցում և խրախուսում է բռնությունները: Կարելի է տեսնել ուղիղ կապ թշնամուն վերագրվող մեղադրանքների և իրագործվող բռնությունների միջև.

ա) Դրանցից առաջինը թուրք-ադրբեջանական վերնախավի և հասարակության կողմից հայության ունեցվածքի ակտիվ թալանն էր: Հաճախ այն դիտվում էր զանգվածային անկարգություններին մասնակցության համար պարգևատրության ձևերից մեկը: Օսմանյան կայսրությունում հայերի ունեցվածքը կողոպտում էին ոչ միայն կառավարությունն ու «Միություն և առաջադիմություն» կուսակցության շրջանային քարտուղարները (Դևիս 2001: 117): Հայերին տեղահանելուց առաջ նախ ոստիկանները, ժանդարմները, հաճախ նաև զինվորները յուրացնում էին արժեքավոր իրերը, ապա թույլատրում մուսուլման բնակչությանը կողոպտելու հայերի բնակարանները: Այդ կողոպուտը նույնությամբ շարունակվում էր նաև գաղթի ճանապարհներին (Յուհաննսոն 2008: 25, 48; Անտոնյան 1990: 54-57):

Նույն մոդելն էր գործում նաև Սումգայիթում: Հ. Խառատյանը, անդրադառնալով այն փաստին, որ Սումգայիթում, ինչպես նաև հետագայում Բաքվում և Կիրովաբադում հայերի ունեցվածքի կողոպուտը խրախուսվում էր «Նարոդնի ֆրոնտի» կողմից, գրում է.

> *«Սովորաբար կար թալանի երեք փուլ: Առաջին փուլում ունեցվածքի առավել թանկարժեք իրերը (տեխնիկա, ոսկեղեն, լավ կահույք, լավ սպասք, լավ հագուստ) թալանում էին տանտերերի հետ հաշվեհարդար տեսածները: Քանի որ դրանք մեծ խմբեր էին, նրանց մեջ հաճախ էին վեճեր լինում այս կամ այն գույքի, իրի համար: Նրանց գնալուց հետո թալանը*

շարունակում էին հարևանները: Ավելի ուշ, հաջորդ օրերին, բնակարաններում մնացած գույքը կամ իրերը մաս-մաս տանում էին պատահական մարդիկ» (Խառատյան 2006):

բ) Մյուս մեղադրանքը, որը վերագրվում էր հայերին թուրքերի և ադրբեջանցիների կողմից, ինչպես արդեն նշել ենք, անկախության ձգտումն էր և տարածքային ամբողջականության սպառնալիքը: Շրջանառության մեջ դրված այս մեղադրանքը ևս մեծ արձագանք էր գտնում հասարակության կողմից և դրսևորվում բռնություններում: Պատահական չէ, որ Հայոց ցեղասպանության ժամանակ բռնություններ գործադրելիս ծաղրում էին հայերի «պետական նկրտումները» (ցցերի հանված երեխաներին որպես հայկական դրոշ ներկայացնելը), ինչպես նաև մատնացույց էին անում, որ «Հայաստան» կարող են ստեղծել միայն անապատներում (Բինօն 1919: 57): «Նույն կերպ Սումգայիթում «Ղարաբաղը մերն է», «Ղարաբաղը չենք տա» կարգախոսը շատ արագ վերածվեց «Մահ հայերին», «Հայեր, ռահ եղեք», «Մեզ հայերի գլուխներն են պետք» կարգախոսներին և դրանց հաջորդած գործողություններին (Խառատյան 2006; Шахмурадян 1989):

գ) Բռնություններն ընդօրինակելի վարք դարձնող մեկ այլ մշակութային գործոն է ոճրագործների հերոսացումն ու նրանց պարգևատրումը: Ոճրագործները հիմնականում պարգևատրվում էին պաշտոնի բարձրացմամբ կամ ստանում էին դրամական կամ այլ նյութական պարգև: Այս երևույթը դիտարկենք մի քանի մասնավոր օրինակներով՝ անդրադառնալով խոշտանգման ձևերի, հատկապես գլխատման խրախուսմանը: Հայոց ցեղասպանությունը վերապրած Եզնիկ վարդապետ Ներկարարյանը վկայում է.

«1915 թ. ապրիլի 4-ին Դանիէլ վարդապետի հետ Այգեստանէն իջանք քաղաք: Արդէն ժողովուրդին մէջ տարածուած էր Իշխանի և իր ընկերներուն սպաննութեան լուրը, իսկ Վռամեանը վար դրուած էր կուսակալի բնակարանին մէջ: Երկու ժամ յետոյ ինձ մօտ եկաւ ուստանցի ասքեար Բրահիմը, որի եղբայրը սպաննուած էր Ջանգիր աղայի (ուստանցի) ձեռքով, և որ յոյս ունէր մեզ գաղտնիքներ հաղորդելով՝ իր թշնամուն պատժել տալ մեր աջակցութեամբ: Ինձ ասաց նա՝ «Վարդապետ, Ձեզնից երէկ որոնք են գնացեր Խավասոր (Հայոց Ձոր): Հաստատապէս գիտեմ, որ անոնք սպաննուել են, գլուխները կտրել, բերել են Ձևրէթին [Վանի նահանգապետ–Հ.Գ.], և ան ալ երեսուն ոսկի պարգև է տուել անոնց» (Հայոց ցեղասպանությունը Օսմանյան Թուրքիայում 2012-1: 29):

2005 թ. սկսած՝ Ադրբեջանում փառաբանվում է Իբադ Հուսեյնովը, ով իբր գլխատել է հայ ազգային հերոս Մոնթե Մելքոնյանին: Այս առթիվ Ադրբեջանի Ազգային պաշտպանության նախարարության հովանավորությամբ նկարահանվել է «փաստավավերագրական» ֆիլմ («Asker»), ստեղծվել են նրան նվիրված երգեր, գրվել են գրքեր: Շրջանառության մեջ է դրվում այն, որ իր «քաջագործության» համար Ի. Հուսեյնովը Ադրբեջանի նախագահ Ի. Ալիևի

կողմից պարգևատրվել է «Ադրբեջանի դրոշ» շքանշանով: Սակայն «Թուրան գործակալությանը» տված հարցազրույցում գեներալ-լեյտենանտ Թալիբ Մամեդովը նշում է, որ Ի. Հուսեյնովը ոչ մի կապ չունի Մ. Մելքոնյանի սպանության հետ: Նա պարգևատրվել է 1994 թ. և հռչակվել ազգային հերոս, բայց Մ. Մելքոնյանին գլխատելու մասին որևէ լուր չի շրջանառվել: «Թուրան գործակալությունը» գրում է.

> *«Առաջին հայացքից ծիծաղելի և հիմար թվացող այս նախաձեռնությունը շուտով ձեռք բերեց մեծաթիվ հետևորդներ, ովքեր որոշեցին քաղաքական և նյութական օգուտներ քաղել: Նրանք սկսեցին փառաբանել և գովաբանել «հերոսին»՝ երիտասարդությանը կոչ անելով օրինակ վերցնել նրանից»* (Azerbaijani media expose myth.... 2015):

Այստեղ կարող ենք արձանագրել կարևոր հանգամանք՝ թշնամուն գլխատելը պետական մակարդակով օրինականացվում է որպես ռազմական հերոսություն և ներկայացվում որպես ընդօրինակելի վարք:

2012 թ. Ադրբեջանի նախագահ Ի. Ալիևը պարգևատրել է նաև ադրբեջանցի լեյտենանտ Ռամիլ Սաֆարովին, ով 2004 թ. Բուդապեշտում ՆԱՏՕ-ի դասընթացների ժամանակ կացնահարել է քնած հայ սպա Գուրգեն Մարգարյանին: 2012 թ. օգոստոսի 31-ին Ռ. Սաֆարովը Հունգարիայի կառավարության կողմից հանձնվել է Ադրբեջանին, որտեղ նրան ընդունել են որպես հերոս: Ի. Ալիևը նրան շնորհել է մայորի կոչում, նվիրել բնակարան և վճարել բանտում նրա անցկացրած ութը տարվա աշխատավարձ (Kendzior 2012): Այս շարքը եզրափակվում է ապրիլյան քառօրյա պատերազմում Ք. Սլոյանին գլխատած ադրբեջանցի զինվորի պարգևատրմամբ:

Ամփոփում

Այսպիսով, 2016 թ. ապրիլին հայ-ադրբեջանական «քառօրյա պատերազմի» ընթացքում ադրբեջանական բանակի զինվորների կողմից գործադրված բռնության ձևերը՝ գլխատումներ, անդամահատումներ, ականջ կտրել, տարածված են եղել Հայոց ցեղասպանության ժամանակ, ինչպես նաև հանդիպում են հայ-ադրբեջանական պատերազմի ընթացքում: Բռնության «արքետիպային» և «ծիսականացված» այս ձևերը 20-21-րդ դարում գրեթե նույն կերպ են դրսևորվում՝ մատնանշելով թշնամու նկատմամբ հաղթանակը, սեփական հանրությանը ցուցադրելով ռազմական առավելությունը և, ձգտելով ահաբեկել թշնամուն, պատժել վերջինիս և այդպիսով վերականգնել «արդարությունը»:

Վերոհիշյալ բռնությունները և դրանց որոշակի դրսևորումները շարունակում են արդիական մնալ թուրք-ադրբեջանական զինված խմբավորումներում (Հայոց ցեղասպանության ժամանակ նաև շարքային քաղաքացիների կողմից), քանի որ *օրինականացվում են* պետական համակարգի կողմից՝ դառնալով հավատալիքների ու համոզմունքների կուռ համակարգ և ընդունակելի նորմ: Պետական գաղափարախոսությունը ձևավորում է այնպիսի մշակութային մոդելներ, որոնք նպատակաուղղված են ազգային միասնականությանը

և ռացիոնալիզացում են «թշնամու» նկատմամբ բռնությունները: Այսպիսով, «թուրք-ադրբեջանական» պետական գաղափարախոսությունը նպատակաուղղված էր էթնիկ/ազգային ինքնության ձևավորմանը կամ ամրապնդմանը և վերջինիս դոմինանտության հաստատմանը: Այդ նպատակով թե՛ Օսմանյան կայսրությունում, թե՛ Ադրբեջանում մշակվեց թշնամի հայի կերպարը, ապա սկսվեց վերջինիս հասցեին մեղադրանքներ ներկայացնելը: Այստեղ մեծ դեր էր խաղում պետական քարոզչամեքենան, որը ձևավորում էր հասարակական կարծիք և ամենաթողության ու անպատժելիության մթնոլորտ՝ հաստատելով թշնամուն ոչնչացնելու անհրաժեշտությունը: Օսմանյան կայսրությունում թշնամու կերպարի վերածված հայերը մեղադրվում էին դավաճանության, ապստամբության, անկախություն ստեղծելու ձգտման մեջ, ներկայացվում որպես թուրքերի հաշվին հարստացածներ, սպառնալիք տարածքային ամբողջականությանը, թուրքական ինքնությանը և այլն: Հայերի կողմից «անկախության վերականգման սպառնալիքը» և «ադրբեջանցիների հաշվին բարեկեցիկ կյանք» ունենալու մեղադրանքներն ակտիվ գործողության մեջ էին դրվել նաև սումգայիթյան ջարդերի կազմակերպիչների կողմից: Թշնամուն ոչնչացնելու անհրաժեշտությունը հաստատելուց հետո վերնախավը պարգևատրման ինստիտուտի միջոցով և սեփական վարքի օրինակով մատուցում և խրախուսում է բռնությունները: Կարելի է տեսնել ուղիղ կապ թշնամուն վերագրվող մեղադրանքների և իրագործվող բռնությունների միջև: Ա) Դրանցից առաջինը թուրք-ադրբեջանական վերնախավի և հասարակության կողմից հայության ունեցվածքի ակտիվ թալանն էր: Հաճախ այն դիտվում էր զանգվածային անկարգություններին մասնակցության համար պարգևատրության ձևերից մեկը: բ) Մյուս մեղադրանքը, որը վերագրվում էր հայերին թուրքերի և ադրբեջանցիների կողմից, անկախության ձգտումն էր և տարածքային ամբողջականության սպառնալիքը: Շրջանառության մեջ դրված այս մեղադրանքը ևս մեծ արձագանք էր գտնում հասարակության կողմից և դրսևորվում բռնություններում ու կարգախոսներում: գ) Բռնություններն ընդօրինակելի վարք դարձնող մեկ այլ մշակութային գործոն է ոճրագործների հերոսացումն ու նրանց պարգևատրումը: Բոլորովին էլ պատահական չէ, որ թուրքական և ադրբեջանական հերոսները հենց թշնամուն գլխատող հերոսներ են:

Գրականություն

***Աբէլեան Գ.* 2010.**
Աղբարիկ, ափիկ մը ջուր..., Այնճար, Վահէ Սէթեան:

***Անպոնյան Ա.* 1990.**
Մեծ ոճիրը: Հայկական վերջին կոտորածները և Թալեաթ փաշա: Երևան. «Արևիկ»:

***Բինօն Ռ.* 1919.**
Հայերու բնաջնջումը: Գերմանական մէթոտ-թրքական գործելակերպ: Կ.Պոլիս. Տպ. Կ. Արձագանգի:

***Գուսպ Վ.* 2008.**
Հայերի ցեղասպանությունը 1915-1916: Գերմանիայի արտաքին գործերի նախարարության քաղաքական արխիվի փաստաթղթերից: Երևան. «Հայագիտակ»:

***Դեսպան Կիրակոսյանի հայտարարությունը.* 2016.**
Դեսպան Կիրակոսյանի հայտարարությունը Ադրբեջանի կողմից միջազգային հումանիտար իրավունքի խախտումների վերաբերյալ, http://www.mfa.am/hy/press-releases/item/2016/04/14/osce_hum/, 14.04.2016:

***Դևիս Լ.* 2001.**
Սպանդի նահանգը: Երևան. Դալլ:

***Թալիշում...,* 2016.**
Թալիշում Խալափյանների գնդակահարման ժամանակ գյուղի բնակիչները դեռևս չէին տարհանվել, https://armenpress.am/arm/news/842037/, 04/04/2016:

***....Իրավապաշտպան.* 2016.**
Ադրբեջանցիների մոտ հայտնված զինծառայողներին խոշտանգել են, հետո գլխատել, իրավապաշտպան, http://www.panorama.am/am/news/2016/04/12/%D4%BB%D6%80%D5%A1%D5%BE%D5%A1%D5%BA%D5%A1%D5%B7%D5%BF%D5%BA%D5%A1%D5%B6/1561575, 12.04.2016:

***Խառատյան Հ.* 2006.**
Ջոհի ընտրությունը և զոհաբերության հետևանքները Ադրբեջանի «Նարոդնի ֆրոնտի» օրինակով (ձեռագիր):

***Հակոբյան Լ.* 2015.**
Հայի՝ որպես թշնամու կերպարի ձևավորման առանձնահատկությունները, http://www.noravank.am/arm/articles/detail.php/?ELEMENT_ID=13762&print=Y, 19.05.2016:

***Հայոց ցեղասպանությունը Օսմանյան Թուրքիայում–1.* 2012.**
Հայոց ցեղասպանությունը Օսմանյան Թուրքիայում: Վերապրածների վկայություններ: Փաստաթղթերի ժողովածու: Հատոր I, Վանի նահանգ (Վիրաբյան Ա., խմբ.): Երևան. հրատ. Հայաստանի ազգային արխիվի:

***Հայոց ցեղասպանությունը Օսմանյան Թուրքիայում–2.* 2012.**
Հայոց ցեղասպանությունը Օսմանյան Թուրքիայում: Վերապրածների վկայություններ: Փաստաթղթերի ժողովածու: Հատոր II, Բիթլիսի նահանգ, (Վիրաբյան Ա., Խմբ.): Երևան. Հրատ. Հայաստանի ազգային արխիվի:

***Մորգենթաու, Հ.* 2012.**
Դեսպան Մորգենթաուի պատմությունը: Երևան. ՀՀ ԳԱԱ ՀՑԹԻ:

***Յոհաննսոն Ա.* 2008.**
Աքսորյալ ժողովուրդ. մեկ տարի հայոց պատմությունից: Երևան. ՀՀ ԳԱԱ ՀՑԹԻ:

***Յուշամատեան Մեծ եղեռնի.* 1965.**
(1915-1965), Պատրաստեց՝ Ահարոնեան Գ., Պէյրութ, «Ատլաս»:

***Պապաքեան Գ. Ծ. Վարդ.* 1922.**
Հայ գողգոթան. դրուագներ հայ մարտիրոսագրութենէն. Պեոլինէն դէպի Ջօր 1914-1920, Ա. հատոր, Վիեննա, տպ. Մխիթարեան:

***Սպիրով Դ.* 2000.**
Հայաստանը և սուլթան Աբդուլ Համիդը: Երևան. հրատ. ՀՀ ԳԱԱ ՀՑԹԻ:

***Սվազլյան Վ.* 2011.**
Հայոց ցեղասպանություն. ականատես վերապրողների վկայություններ: Երևան. «Գիտություն»:

***Ֆապրիքաճեան Լ.* 1985.**
Կարաւանը մահուան ճանապարհին: Պէյրութ. Ալթափրես:

***Ֆրեզեր Ջ.* 1989.**
Ոսկե ճյուղը. մոգության և կրոնի ուսումնասիրություն: Երևան. «Հայաստան»:

***Azerbaijani media expose myth....,* 2015.**
Azerbaijani media expose myth about local intelligence agencies and Ibad Huseynov's involvement in Monte Melkonian's death. Retrieved 18. 05. 2016, from http://www.panorama.am/en/news/2015/11/03/azerbaijan-monte-melkonia/1473415.

***Chirot D. and McCauley C.* 2010.**
Why not kill them all? The Logic and Prevention of Mass Political Murder. New Jersey: Princeton University Press.

***Galtung J.* 1990.**
Cultural Violence. Journal of Peace Research. 27(3): 291-305.

***Geneva Convention.* 1952.**
Geneva Convention For the Amelioration of the Condition of the wounded and sick in Armed Forces in the Field, I. (Pictet J., Ed.). Geneva, ICRC. Retrieved 19. 05. 2016, from https://www.loc.gov/rr/frd/Military_Law/pdf/GC_1949-I.pdf.

***Gibbons H.* 1916.**
The Blackest Page of Modern History. Armenian Events of 1915. The Facts and the Responsibilities. New York and London: G. P. Putnam's Sons, The Knickerbocker Press.

***Glossary of Hate Speech.* 2008–2013.**
Glossary of Hate Speech in the Media of Armenia and Azerbaijan, Baku-Yerevan.

***Karabakh conflict.* 2016.**
Karabakh conflict: Azerbaijani soldiers behead Ezidi from Armenia. Retrieved 04. 04. 2016, from http://ezidipress.com/en/karabakh-conflict-azerbaijani-soldiers-behead-ezidi-soldier-from-armenia/.

***Kendzior S.* 2012.**
The Axe Murderer Who Became a Facebook Hero. Retrieved 18.05.2015, from http://www.aljazeera.com/indepth/opinion/2012/09/201293953565974.html.

***Maragha.* 1992.**
http://maragha.org/video.html, Retrived 13.02.2017.

***Protocols Additional...,* 2012.**
Protocols Additional to the Geneva Conventions of 12 August 1949. Geneva, ICRC. Retrieved 19.05.2016, from https://www.icrc.org/eng/assets/files/other/icrc_002_0321.pdf.

***Singer B.* 1989.**
Violence in the French Revolution: Forms of Ingestion/Forms of Expulsion. Social Research. The French Revolution and the Birth of Modernity. 56(1): 263-293.

***Абрамян Л.* 1983.**
Первобытный праздник и мифология. Ереван: АН Армянской СССР.

***Адибекян А., Элибегова А.* 2013.**
Армянофобия в Азербайджане. Ереван: «Центр общественных связей и информации».

***Дадрян В.* 2007.**
История армянского геноцида. Этнический конфликт от Балкан до Анатолии и Кавказа. Ереван: Ноян Тапан.

***Емельянов В.* 2003.**
Ритуал в Древней Месопотамии. СПб: «Азбука-классика».

***Логинов О.* 2016.**
Средневековье. Казни мира. Энциклопедия казней, http://www.all-crime.ru/kazni/en-kazney/kazni-en-02-drevniy-mir.htm, 15.05.2016

***Жигульский К.* 1985.**
Праздник и культура. Москва: Прогресс, 93-100.

***Жирар Р.* 2000.**
Насилие и священное. Москва: Новое литературное обозрение.

***Мелик-Шахназарян Л.* 1997.**
Военные преступления Азербайджана против мирного населения Нагорного-Карабахской Республики. Ереван: Наири.

***Назаретян А.* 2007.**
Антропология насилия и культура самоорганизации: Очерки по эволюционно-исторической психологии. Москва: ЛКИ.

***Насибова М.* 2015.**
“Великая Армения” – рецепт национального самоубийства, http://1news.az/authors/oped/20150403012200777.html, 17. 05. 2016.

***Рахимов Р.* 2001.**
Насилие в культуре таджиков (миф и немиф), Антропология насилия, (Бочаров В., Тишков, В., Ред.). СПб: Наука, 382-476.

***Тард Г.* 1902,**
Общественное мнение и толпа. Москва: Т-ва типографии А. И. Мамонтова.

***Флиер А.* 2007.**
Культура насилия / Новая цивилизация. Междисциплинарный научно-практический сборник. Самара: Изд. Самарского научного центра РАН, 56-69.

***Флиер А.* 2012.**
Культурные основания насилия. Гуманитарные науки: теория и методология, 1, 19-25.

***Харатян Г.* 2015.**
Официальные этно-демографические показатели в Азербайджане в контексте поиска и кризиса индентичности азербайджанцев. Удины: крах всех усилий цамосихранения. Москва: Центриздат.

***Шахмурадян С.* 1989.**
Сумгаитская трагедия в свидетельствах очевидцев. Ереван, http://sumgait.info/sumgait/the-sumgait-tragedy/sumgait-tragedy-bedian-barmen.htm, 28.04.2016.

***Элиаде М.* 1998.**
Миф о вечном возвращении. Архетипы и повторяемость. СПб: Алетейа.

ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2

Հ Ա Բ Ի Տ Ո Ւ Մ

ՄԱՐԴԱԲԱՆԱԿԱՆ ԵՎ ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2

Էջադրումը և ձևավորումը
Արթուր Հարությունյանի

Շապիկը՝
Ռոման Հովսեփյանի

Habitus-ի խմբագրակազմը շնորհակալություն է հայտնում ազգագրագետ, պատմական գիտությունների դոկտոր **Հարություն Մարությանին** և **Մարիամ Շահմուրադյանին**՝ խմբագրական աշխատանքներին աջակցելու և խորհուրդների համար:

Շնորհակալություն ենք հայտնում ազգագրագետ, ՀՀ ԳԱԱ թղթակից-անդամ **Լևոն Աբրահամյանին**՝ իր հեղինակած երգիծանկարները տրամադրելու համար:

Խմբագրության հասցեն՝
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ,
Հասցե՝ 0025, ՀՀ, ք. Երևան, Չարենցի փ. 15,
Habitus-ի էլեկտրոնային փոստը՝ habitus.iae.am@gmail.com
Կայքը՝ www.iae.am, www.iae.am/hy/HABITUS

Editorial office:
Institute of Archaeology and Ethnography, NAS RA.
Address: 15 Charents str., 0025, Yerevan, Armenia
Email of Habitus: habitus.iae.am@gmail.com
Web page: www.iae.am, www.iae.am/en/Habitus-2

Տպագրված է «Հայկարլի ՍՊԸ» տպարանում
Հեռ. 091 206 115

Չափսը՝ 70×100 1/16: Թուղթ՝ օֆսեթ:
16.5 տպագր. մամուլ: Տպաքանակը՝ 200 օրինակ:

PROCEEDINGS OF THE INSTITUTE
OF ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY · 2

HABITUS · 2